ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/82

ք. Վանաձոր «17» հունիսի 2021թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Վ.Մկրտչյանի, որը գործում է ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ.Թադևոսյանի , որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում, վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագիրը կատարել թվով ---աշխատակիցների միջոցով և պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը,

2.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 56,000,000 /հիսունվեց միլիոն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

3.3 Սույն պայմանագրի 2.4.11 և 2.4.12 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով վաճառողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2

գետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42	ք. Երևան, Արզումանյան 32-10
<ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/ղ	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 1150004484110100	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 06945592	ՀՎՀՀ 01210095
Տնօրեն Վ.Մկրտչյան	Տնօրեն՝ Բ. Թադևոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել Հ/Հ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված
«17» հունիսի 20 21 թ. կնքված
ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/82 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքայի ն նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկակա ն բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհան ուր քանակ ը	մատակարարման		
									հասցեն	ենթակ ա քանակ ը	ժամկետը***
1	33161140	էնդոսկոպիկ տեսահամակարգի աբողջական հավաքածու	Տես Հավելված 1,1	Տես Հավելված 1,1	լրակազ մ	56000000	56000000	1	Ք.վանաձոր Գ.Նժդեհի 2/42	1	*Հունիս-օգոստոս 2021*

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

Հավելված 1.1
<u>Էնդոսկոպիկ վիդեո համակարգի հավաքածու,</u>
<u>Հավաքածուն ներառում է</u>

1. Էնդոսկոպիկ վիդեոպրոցեսոր
2. Վիդեոգաստրոսկոպ
3.Վիդեոկոլոնոսկոպ
4.Վիդեոդուոդենոսկոպ
5. Բշկական մոնիտոր 32՝
6. Աշխատանքային կանգնակ
7. Հերմետիկության չափիչ
8. Էնդոսկոպիկ իրիգացիոն պոմպ
9. CO2 ինսուֆլատոր, էնդոսկոպիկ

Չափաբաժնի համարը	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակիշը	արտադրողի անվանումը
2	Էնդոսկոպիկ տեսահամակարգի աբողջական հավաքածու	1. Video Processor EPK-i500 2. Video Gastroscope EG-2990i 3. Video Colonoscope EC-3890Li 4. Video Duodenoscope ED34-i10 5. Radiance Ultra Monitor 32" 6. Classic Trolley With Insulation Transformer 7. SHA-P6 Auto Leakage Tester 8. Irrigation Pump EP.01 9. CO2 EM.C02.01	1. EPK-i5000 2. EG-2990i 3. EC-3890Li 4. ED34-i10 5. 30" Ultra Monitor 6. Classic Trolley With Insulation Transformer 7. SHA-P6 8. EP.01 9. EM.CO2.01	1. Pentax Medical 2. Pentax Medical 3. Pentax Medical 4. Pentax Medical 5. NDS 6. ITD 7. Pentax Medical 8. Endo Stars LLC 9. Endo Stars LLC

Տեխնիկական նկարագրություն

	Ապրանքի ֆունկցիոնալ և որակական հատկանիշները, սպասարկումը	
1	Էնդոսկոպիկ վիդեոպրոցեսոր	
	Վիդեոգաստրոսկոպ, վիդեոկոլոնոսկոպ, վիդեոբրոնխոսկոպ, վիդեոդուոդենոսկոպ, վիդեոգաստրոսկոպ ուլտրաձայնային /ռադիալ և կոնվեկս/, վիդեոբրոնխոսկոպ ուլտրաձայնային	Առկայություն
	HD աջակցություն մոնիտորի վրա պատկերներ ցուցադրելու համար	Առկայություն
	Վիդեոքրոմոսկոպիայի թվային հնարավությամբ	Առկայություն
	Պայծառության ավտոմատ կարգավորումով	Առկայություն
	Էնդոսկոպի բռնակի կոճակների վրա ծրագրավորման հնարավորությունը	Առկայություն
	Հիվանդի տվյալները մուտքագրելու և պահպանելու հնարավորություն	Առկայություն
	Պատկերի սառեցման հնարավորություն	Առկայություն
	Սպիտակ հավասարակշռության կարգավորում	Առկայություն
	Անալոգային վիդո ազդանշանի ելքերը	RGB, video-out, Y/C, VGA
	Թվային վիդեո ազդանշանի ստանդարտը	DVI

	Պատկերների արտաքին կրիչում նկարամակարգչում պահելու ունակություն	Առկայություն
	Պատկերների միաժամանակյա վերարտադրում տարբեր վիդեո ելքերից Պատկերները արտաքին կրիչներում պահելու ունակություն	Առկայություն
	USB պորտերի առկայությունը,USB կրիչներ միացնելու համար	Առկայություն
	Ստեղնաշարը ներառված է	Առկայություն
	Օպտիկական խոշորացումով էնդոսկոպին միանալու հնարավորությունը, մինչև 136 անգամ	Առկայություն
	Լույսի աղբյուր	քսենոնային
	Ներկառուցված լույսի աղբյուրի հզորությունը	300 Վտ
	Պահեստային լամպի տեսակը	LED
	Պայծառության ձեռքով և ավտոմատ կարգավորում	Առկայություն
	Ներկառուցված պոմպ	Առկայություն
	Օդի մատակարարման ինտենսիվության փոփոխական մակարդակների առկայություն	Առկայություն
	Առջեւի վահանակի օդի մակարդակի անջատիչ կոճակը	Առկայություն
	Լույսի ինտենսիվության փոփոխման մակարդակներ	Առկայություն
	Առջևի վահանակին լամպի մաշվածության ցուցիչ	Առկայություն
	Առջեւի վահանակին պայծառության մակարդակի ցուցիչ	Առկայություն
	Կարճաժամկետ պայծառության բարձրացման հնարավորություն	Առկայություն
2	**Վիդեոգաստրոսկոպ 1 հատ**	
	Համատեղելի է վիդեոկենտրոնի և լույսի աղբյուրի հետ	Առկայություն
	Դիտման ուղղություն	առաջ
	Տեսադաշտի անկյունը	140°
	Խորությունը	5-100 մմ

	Դիստալ գագաթի տրամագիծը	10.8մմ
	Ներթափանցո խողովակի տրամագիծը,	9,8 մմ
	Աշխատանքային կանալի տրամագիծը	2,8 մմ
	Դիստալ գագաթի ճկումը՝ վերև	210 °
	Դիստալ գագաթի ճկումը՝ ներքև	120 °
	Դիստալ գագաթի ճկումը աջ	120 °
	Դիստալ գագաթի ճկումը ձախ	120 °
	Խողովակի աշխատանքային երկարությունը	1050 մմ
	Էնդոսկոպի բռնակի վրա ծրագրավորվող կոճակների առկայություն	Առկայություն
	Հողանկցման հնարավորություն էնդոսկոպի վրա	Առկայություն
	Լրացուցիչ ջրամատակարարման լուսացք	Առկայություն
3	**Վիդեոկոլոնոսկոպ**	
	Համատեղելի է վիդեոկենտրոնի և լույսի աղբյուրի հետ	Առկայություն
	Դիտման ուղղություն	առաջ
	Տեսադաշտի անկյունը	140°
	Խորությունը	4-100 մմ
	Դիստալ գագաթի տրամագիծը	13,2 մմ
	Ներթափանցո խողովակի տրամագիծը	13,2 մմ
	Աշխատանքային կանալի տրամագիծը	3.8 մմ
	Դիստալ գագաթի ճկումը՝ վերև	180 °
	Դիստալ գագաթի ճկումը՝ ներքև	180 °
	Դիստալ գագաթի ճկումը աջ	160 °

	Դիստալ գագաթի ճկումը ձախ	160 °
	Խողովակի աշխատանքային երկարությունը	1700 մմ
	Էնդոսկոպի բռնակի վրա ծրագրավորվող կոճակների առկայություն	Առկայություն
	Հողանկցման հնարավորություն էնդոսկոպի վրա	Առկայություն
	Լրացուցիչ ջրամատակարարման լուսացք	Առկայություն
4	**Վիդեոդուոդենոսկոպ**	
	Դիստալ հատվածում բարձր լուծարման CCD մատրիցա	Առկայություն
	Պատկերի փոխանցման ստանդարտ	HD
	Դիտման ուղղություն	100° /կողային դիտում հետ 10°/
	Տեսադաշտի անկյունը	100°
	Խորությունը	4-60 մմ
	Դիստալ գագաթի տրամագիծը	13,6 մմ
	Ներթափանցո խողովակի տրամագիծը,	11,6 մմ
	Աշխատանքային կանալի տրամագիծը	4,2 մմ
	Դիստալ գագաթի ճկումը՝ վերև	120 °
	Դիստալ գագաթի ճկումը՝ ներքև	90 °
	Դիստալ գագաթի ճկումը աջ	105 °
	Դիստալ գագաթի ճկումը ձախ	90 °
	Խողովակի աշխատանքային երկարությունը	1250 մմ
	Էնդոսկոպի բռնակի վրա ծրագրավորվող կոճակների առկայություն	
5	**Աշխատանքային կանգնակ**	

	Տեղադրվելիք դարակների քանակը	4 հատ
	Վերին դարակը մոնիտորի բռնակով	Առկայություն
	Յուրաքանչյուր դարակի բեռնման հզորությունը՝	50 կգ
	Ստեղնաշարի դարակը	Առկայություն
	Էնդոսկոպի կրիչ, կրկնակի	Առկայություն
	Վարդակներ կանգնակի մեջ ներկառուցված	Առկայություն
	Անջատիչ է ամբողջ մոդուլի համար	Առկայություն
	Դարակը հագեցած է չորս անիվի հենակներով	Առկայություն
6	**Բժշկական մոնիտոր**	
	Անկյունագիծ	27 դյույմ
7	**Հերմետիկության չափիչ**	
8	**Էնդոսկոպիկ իրիգացիոն պոմպ**	
	Հեղուկի հոսքի նվազագույն արագություն, մլ / րոպե	220
	Հաճախականությունը	650
	Էլեկտրաէներգիայի սպառումը	70
	Սարքի մուտքային նվազագույն ճնշումը	0,25 ՄՊա
	Չափերը /բարձրություն, լայնություն, խորություն)	100x200x330
	Կառավարման բլոկի քաշը	5 կգ
	Հեղուկի հոսքի արագությունը կարգավորելու և էնդոսկոպի լուսանցքը հեղուկով լցվելու ավտոմատ սկսելու / դադարեցնելու կոճակ	Առկայություն
	Հեղուկի հոսքի սահմանված արագության լուսային ցուցիչ	Առկայություն
	Մետաղական կորպուս դիմային հատվածի ջրակայուն ծածկով	Առկայություն

	Հեղուկի հոսքի արագության կարգավորում	Առկայություն
	Հեղուկի հոսքի արագության ցուցիչ	Առկայություն
	Էնդոսկոպի լուսանցքի հեղուկով լցման ավտոմատ ֆունկցիա	Առկայություն
	Բռնակի վրա երկու հեղուկով տարաների ամրացման հնարավորություն շարժական ձողի շնորհիվ	Առկայություն
	Վերջին դրված հեղուկի հոսքի արագության պահպանում սարքի հիշողության մեջ	Առկայություն
	Հեղուկի հոսքի նվազագույն արագությունը	0,2 լ/րոպե
	Հեղուկի հոսքի առավելագույն արագությունը	1,0 լ/րոպե
9	**CO2 ինսուֆլատոր, էնդոսկոպիկ**	
	Նախատեսված է աղեստամոքսային տրակտի խոռոչավոր օրգանների լուսանցքը լայնացնելու համար՝ ածխաթթու գազի մատակարարման միջոցով	Առկայություն
	Էնդոսկոպիկ գործողությունների ընթացքում տեսանելիությունը բարելավելու համար	Առկայություն
	Լարումը	220 Վ
	Հաճախականությունը	50 Հց
	Էլեկտրաէներգիայի սպառումը	70
	Սարքի մուտքային նվազագույն ճնշումը	0,25 ՄՊա
	Չափերը՝ (բարձրություն, լայնություն, խորություն)	100x200x300
	Կառավարման բլոկի քաշը	5 կգ
	Մեկուսիչ փականով բարձ ճնշման թեի արաք անճատվող կցիչ	3.5 լ / րոպե
	Կենտրոնական գազամատակարարման համակարգին միանալու հնարավորություն	54
	Ներկառուցված մուտքային ֆիլտր գազը խառնուրդներից մաքրելու համար:	Առկայություն
	Հեղուկ բյուրեղային էկրան 128x64 հնարավորությամբ	Առկայություն
	Գազի տաքացման ֆունկցիա	

	Տաքացված գազի նվազագույն ելքային ջերմաստիճանը	35 C
	Տաքացված գազի առավելագույն ելքային ջերմաստիճանը	39 C
	Ջայնային և լուսային ազդանշան `մուտքի ճնշման նվազագույն թույլատրելիից նվազման դեպքում	Առկայություն
	Ջայնային և լուսային ազդանշան մուտքային ճնշման բացակայության դեպքում	Առկայություն
	Գազի տաքացման միացման ցուցադրում հեղուկ բյուրեղային էկրանին	Առկայություն
	Ելքային ճնշման ցուցադրում հեղուկ բյուրեղային էկրանին	Առկայություն
	Գազի հոսքի նվազագույն արագությունը	1,4 լ/րոպե
	Գազի հոսքի առավելագույն արագությունը	5 լ/րոպե
	Ելքային հոսքի ճնշման առավելագույն ցուցանիշը գերազանցելու դեպքում գազի հոսքի վթարային անջատման ներկառուցված համակարգ:	Առկայություն
	Գազի հոսքի 5 ռեժիմ	Առկայություն
	Ելքային ճնշումը	50կՊա
	4 ժամ անդադար աշխատանքի հնարավորություն	Առկայություն

ԳՆՈՐԴ

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Լժդեհի 2/42
<ՀայԲիզնեսԲանկ>Վանաձոր մ/ղ
Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592
Տնօրեն Ա. Մկրտչյան

/ստորագրություն/Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Արզումանյան 32-10
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 2
«17» հունիսի 20 21 թ. կնքված
ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/82 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33161140	էնդոսկոպիկ տեսահամակարգի աբողջական հավաքածու	... %	... %	... %	... %	... %	... %	9300,0	18600,0	27900,0	37200,0	46500,0	5600,0	5600,0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ.Եժդեհի 2/42
<ՀայԲիզնեսԲանկ>Վանաձոր մ/ճ
Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592
Տնօրեն՝ Հ.Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Արզումանյան 32-10
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն՝ Ռ. Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ